

Ավետիս Ահարոնյանի 1919թ. հուլիսի 28-ի և 30-ի նամակները Փարիզից

բ.գ.թ. Ալվարո Ղազիյանի համահեղինակությամբ

1918թ. դեկտեմբերի 8-ին Շուշի է գալիս առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած Անտանտի ներկայացուցիչ անգլիական առաքելությունը:

Առաքելության առաջին խնդիրը եղավ Ղարաբաղի սահմաններից զորավար Անդրանիկի հարվածային ջոկատի հեռացնելը: Հինավուրց այդ երկրամասի հայությունը, որը լավատեսական ակնկալիքներ էր կապում Դաշնակից պետությունների, և նրանց ներկայացուցիչ Անգլիայի հետ, շուտով համոզվեց անգլիացիների թշնամական, Ղարաբաղը ՀՀ-ին միավորվելու հանդեպ ոչ բարենպաստ քաղաքականության մեջ:

Բաքվում տեղակայված անգլիական հրամանատարությունը իր մոտեցումները մշակում էր ելնելով 1918թ. նոյեմբերի 21-ին Ֆորին օֆիսում կազմված առաջարկների և քարտեզի, որոնք դեկտեմբերի 2-ին հաստատվել են Ռազմական դահլիճի Արևելյան կոմիտեի նիստում: Ընդունված որոշումը ամրապնդվել է 1919թ. փետրվարի 2-ի թվակիր կառավարական հուշագրով: Ելնելով ազգային-կայսերական շահերից, նավթի ազատ արտահանմամբ հետաքրքրված տեղի ռազմական իշխանություններն անշեղորեն կիրառում էին Լոնդոնի հրահանգը: Մուսավաթական ղեկավարության հետ միական նրանք բացահայտ ու քողարկված քայլերի էին դիմում Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու համար, նկատի ունենալով, որ իրենց կողմից նախատեսված պրոտեկտորատը ծրագրվում էր հատկապես Վրաստանի և Ադրբեջանի սահմաններում: Հայաստանն ի սկզբանե դիտվում էր որպես ամերիկյան մանդատի տարածք:

Հայ պետական, քաղաքական գործիչները աշխատում էին պատմա-աշխարհագրական, տնտեսական ու կարևորը՝ ազգային-ազգագրական փաստարկներով ապացուցել Ղարաբաղի հայկական լինելը: Սակայն խնդիրը լուծվել էր ոչ թե տեղում կամ Դաշնակիցների բանակցային կենտրոն Փարիզում, այլ Լոնդոնում: Ի դեպ, 1919թ. ամռանը, երբ բրիտանական զորքերը թողնում էին Անրդկովկասը և այլևս այդքան շահագրգռված չէին Ադրբեջանի հետ լավ հարաբերություններով, Լոնդոնում՝ հատկապես ռազմական նախարար Ու.Չերչիլի գնահատականներում, հնչել են նոր, ոչ այդքան միանշանակ երանգներ: Թեև Ղարաբաղի հայ բնակչության հանդեպ կոշտ ու անզիջում ճնշումը շարունակվում էր:

Ղարաբաղի հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության հայերի շահերին թշնամական լինելու և սեփական օգուտը հաշվի ունենալու հանգամանքը, այլ փաստարկների կողքին, ապացուցում են Հայաստանի Ազգային արխիվում պահվող բազմաթիվ վավերագրերը: Նրանց շարքում նշենք ՀՀ պատվիրակության անդամ, Ռուսաստանի Պետդոմայի նախկին պատգամավոր Մ.Պապաջանյանի և Արևելյան Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար Վ.Թոմսոնի 1919թ. հունվարի 10-ին

Բաքվում կայացած զրույցը (ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.243, ք.94-115), իսկ ներքո բերվող փաստաթղթերը Բրիտանական կայսրության մասին մեր եզրակացությունը դարձնում է ավելի հավաստի:

Ինչպես առաջին այնպես էլ երկրորդ նամակը հազեցված պատկեր են տալիս Փարիզի վեհաժողովի, և նրանում ՀՀ պատվիրակների գործունեության մասին, ներկայացնում են նրանց ճիգերը Ղարաբաղի խնդիրը խաղաղ ու հայանպաստ ոգով լուծելու ուղղությամբ, պարունակում են հետաքրքիր հանգամանքներ լոնդոնյան գործընթացների մասին: Վերջինը, հատկապես ռազմական նախարար Ու.Չերչիլի մասնակցությունն ու գնահատականները, գիտական նորություն է պարունակում: Ա.Ահարոնյանի արված մեջ-//-70 բերումը առայժմ ստուգվել է Հայաստանի արխիվների նյութերով, որտեղ գտել ենք Երևանից, արտգործնախարարության գլխավոր քարտուղար Հ.Տեր-Հակոբյանի Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանին ուղղված 1919թ. սեպտեմբերի 16-ի նամակը (ՀԱԱ ֆ.275, ց.5, գ.101, ք.80-81 դարձ, հրապարակվել է նաև. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Под ред. В.А. Микаеляна. Ереван, АН Армения, 1992, էջ 341-342): Վերջինս պարունակում է ինչպես բրիտանական պառլամենտի անդամ Ա.Ուիլյամսի հունիսի 23-ի նամակին Ու.Չերչիլի տված պատասխանի հայերեն թարգմանությունը, այնպես էլ Լոնդոնի անցուդարձի և այնտեղ մշակված քաղաքականության արդարացի գնահատականները:

## № 1

ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Ս.ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ<sup>1</sup>

28 հուլիս, 1919թ.

Փարիզ

«Փարիզ 28 Հուլիսի 1919թ.

Հայաստանի Արտաքին Գործոց Մեծահարգ Նախարար

Պ.Ս.Տիգրանյանին. -

Ցավ ի սիրտ պիտի ասեն որ Քաջագնունու գալուց ի վեր Ձեզանից սուրհանդակ չունիմ. ճշմարիտ է չորս օր առաջ հասավ գեներալ Բագրատունին<sup>2</sup> բերելով մի միայն Միացյալ Հայաստանի մայսի 28-ի անկախության հայտարարագիրը առանց որևէ այլ շահեկան մանրամասնությունների: Այստեղ, այլ գաղութներում և մանավանդ Կ.Պոլսում մայիս 28-ի ակտի շուրջ վերին աստիճանի անհաճո և մեր դատին վնասաբար ձևով բուռն վեճեր են ծայր տվել մամուլի մեջ: Լիապես իրազեկ չլինելով այդ տեղի անց ու դարձին մասնավորապես մայիս 28-ի ակտի հետ կապված խնդիրներին, անկարող ենք պետք եղած բացատրությունները տալ:

Մեր վերջին սուրհանդակը դեպի Ձեզ մեկնել է անցյալ Հունիսի 24-25-ին. հետեվապես իմ արդի զեկույցը վերաբերում է այդ թվից հետագա քաղաքական անցուդարձին:

Սկսում են թյուրքերից. - Նախընթաց զեկույցիս մեջ թյուրք պատվիրակության մասին խոսելով կասկած էի հայտնել նրանց հաջողության մասին: Ի վերջո գրում էի հետեվյալը՝ «Մեր պատվիրակությունը հիմքեր ունի հավատալու, վոր թյուրքերի գալով Հայաստանի մասին եղած որոշումը, որ ստորագրված է այս տարվա հունվար 30-ին եվ վորի մասին Ձեզ գրել են ժամանակին, փոփոխության չի ենթարկվում. հրաշք կլինի, եթե թյուրքերը կարողանան Միջերկրականից Սև ծով անցնող Այաշ - Օրդու գծից դեպի Արևմուտք (առանց Ջնյուռնիայի և իր նահանգի, որ գրավել են հույները) պահել թյուրքական բաժարձակ գերիշխանության տակ»: Այսօր երջանիկ են ասել, որ իմ կանխասացությունը լիապես կատարվեց. Հունիսի 25-ին խաղաղության կոնգրեսի պատասխանը թյուրքերին Կլեմանտյի ստորագրությամբ շանթի հարված եղավ Օտտոմանյան կայսրության գոյությունը իբրև անկախ և անձեռնմխելի պետություն պաշտպանողների գլխին: Տասնի խորհուրդը իր այդ պատասխանով վճռապես հայ-//71 տարարում է որ 1. Թյուրքիան իբրեվ պետություն ամեն տեղ և ամեն ժամանակ եղել է քաղաքակրթություններ ավերող և առաջադիմության խոչընդոտ: 2. Մուսուլման կրոնը թյուրքերի համար եղել է «գիտակցական ֆանատիզմի» մի զենք քրիստոնիանների ջարդեր կազմակերպելու ինչպես այս պատերազմի ընթացքում հայերի կոտորածը: 3. Հայերի կոտորածի մեջ հավասարապես պատասխանատու են և թյուրք կառավարությունը և թյուրք ժողովուրդը: 4. Թյուրքիան անդառնալի կերպով ապացուցել է, վոր անընդունակ է ժողովուրդներ կառավարել և 5. Դաշնակիցներին է մնում Թյուրքիայի ժողովուրդների բաղտը տնորինելու ծանր պարտքը և նրանք այդ կանեն:

Այս շքեղ սրտապատառ պատասխանը, որ խմբագրել է ինքը Բալֆուր<sup>3</sup> քաղաքական շրջանների միահամուռ կարծիքով պատմության ամենավսեմ դատավճիռն է, որ երբևիցե արտասանվել է: Ավելացնեն նաև հայության կրած անլուր մարտիրոսության առաջին և շոշափելի հատուցումը, որ տվեց խաղաղության կոնգրեսը: Temps-ից առնելով ուղարկում են Ձեզ ներփակ այդ պատմական նշանավոր փաստաթղթի պաշտոնական ճշգրիտ որինակը: Հավատացած են, որ Ձեր գնահատումը տարբեր չի լինի, ինչպես և Ձեր գոհունակության խորունկ զգացումը: Եվ որպես մի այդպես սքանչելի դատավճռի ուժգնությունը լիակատար և թյուրք հանցագործների հիասթափություն ու դառն դասը կատարյալ լինի, այս շշմեցուցիչ պատասխանից չորս հինգ որ հետո Կլեմանտն մի երկրորդ նամակով առաջարկեց թյուրք պատվիրակներին թողնել Փարիզը և վերադառնալ Կ.Պոլիս, հասկացնելու թե Թյուրքիայի ճակատագիրը առանց իրենց էլ կարող է տնորինվել. և թե նրանք այլևս այստեղ անելիք չունեն: Ուղարկում են ներփակ նաև այս վերջին նամակը: Թյուրք պատվիրակությունն արդեն Կ.Պոլիս է հասել ուր թյուրք քաղաքական շրջաններում սկսված է անասելի քառու: Ըստ երեվույթին ավելի մոլեգին, մեծ մասամբ իթթիհատական տարրերը փորձեր են անում կազմակերպելու զինված դիմադրություն դաշնակիցների որոշումների դեմ, մինչդեռ մյուս ավելի

զգաստ մասերը, խորապես համոզված որ դաշնակիցները կատակ անելու չեն, ավելի շուտ հնազանդության և հաշտ քաղաքականության կողմնակից են, առանց սակայն պետք եղած ուլժն ունենալու իրենց կամքը թելադրելու ընթուստներին: Վերջինները (սրանց հետ մեզ քաջածանոթ Րեուֆ բեյ<sup>4</sup> - այժմ փաշա) ճգնում են թյուրք ժողովրդի մեջ հրահրել դիմադրական ոգին և յեթե հնար է ընդհանուր խառնակություններով դաշնակիցների վճռականությունը վարանումի փոխել: Այս նպատակով փոխ առ փոխ առաջ է նետվում և՛ բուլշեվիզմ, և՛ իսլամ և՛ Վիլսոնյան սկզբունքներ ըստ տեղի, ըստ ժամանակի: Այս շարժումների առաջին արտահայտությունները տեսնվեցին արդեն հունական գրավված շրջաններում, հատկապես Այդինում, ուր մի քանի որ կատարյալ հակամարտեր տեղի ունեցան թյուրք և հույն բանակների միջև, վորոնք վերջացան հույների հաղթանակով: Անսպասելի չէ, որ նման փորձեր կատարվին և մեր կողմերում, հատկապես Կարինի շրջանում: Հիմքեր ունինք ենթադրելու, որ դաշնակիցները այդ խաղերին հետևում են պետք եղած ուշադրությամբ և հազիվ թե թույլ տան իրենց որոշումների և ծրագրի sabotage-ը.<sup>5</sup> Գեներալ Ալեմբի<sup>6</sup> նորերս նշանակվեց Փոքր-Ասիայի բոլոր դաշնակից բանակների ընդհանուր հրամանատար. հուսալի է որ այս նշանակումը թյուրքերի շարժումների դեմ վճռական գործողությունների ազդանշանն է: Թողնելով որ հետագա անցքերը գան այս յենթադրությունները հաստատելու, զգուշանում են խիստ վճռական լինելուց ապագայի վերաբերմամբ:

Եվ որովհետև մեր գլխավոր ցավը Հայաստանն է, թույլ կտամ ինձ վերստին կրկնելու իմ նախընթաց զեկույցներիս մեջ արտահայտածս //72 կարծիքը. թե մեր և թյուրքերի բախտը զատված են, չգիտեմ ո՞ր սահմաններում, ի՞նչ ծավալով, մեր ուզած չափո՞վ, թե՞ սահմանափակ, բայց անկախ և հույս ունեն միացյալ Հայաստանը Թյուրքիայից անջատված է: Անկասկած դուք էլ մեզ հետ խիստ անհանգիստ եք, որ մեր մասին տակավին վճռական խոսքը չարտասանվեց, մենք դեռ չճանաչվեցինք իբրեւ անկախ պետություն հակառակ մեր զոհերի և մեր այստեղ թափված ճիգերին:

Բայց որչափ և այդ տարրորինակ թվա Ձեզ այս մեր համար այնքան աղետավոր հապաղումի պատճառը եթե մի կողմից պետություններից մի քանիսի մրցակցությունն է, մյուսի կողմից մեր ապագա խնամարկու (mandataire) և մեր այսորվա հզոր պաշտպան Ամերիկայի Միացյալ Նահանգներն են: Պարզվում է որ Նախագահ Վիլսոնը մեկնելուց առաջ Կոնգրեսի նախագահին հայտարարել է, որ ինքը վեց շաբաթի պետք ունի իր երկրի որոշումը մանդատի (Հայաստանի) մասին հայտնելու համար: Այս առթիվ մանուլի մեջ կիսապաշտոնական հայտարարություններ եղան: Ըստ երեվույթին այդ ժամանակամիջոցը Վիլսոնը անհրաժեշտ է համարել Միացյալ Նահանգների կոնգրեսի ընդդիմադիրների հակառակությունը կոտրելու համար: Նախագահի մեկնելուց անցել է ահա երեք շաբաթ: Ամերիկայում շարունակվում է բուռն պայքար դեմոկրատների և հանրապետականների մեջ դաշնագրի շուրջը, այս պայքարի վախճանից է կախ-

ված մեր երկրի մանդատի խնդիրը: Վիլսոնի դեմ հակամարտությունը բավական ուժեղ է, նախագահը կերևի թե մեծ ճիգերի և ժամանակի պետք ունի հաջողություն ձեռք բերելու համար. Այդ է ապացուցանում և երեկվա լուրը «Նյու Յորք Յերալդ»ի մեջ, ըստ որի Վիլսոնը հայտնել է Կլեմանտին, թե առայժմ Ամերիկայի մանդատ ընդունելու մասին վճռական խոսք չի կարող ասել, ուստի խնդրում է, որ դաշնակիցները en attendant<sup>7</sup> Հայաստանին պետք եղած ոգնությունը հասցնեն: Մենք՝ ինչպես նախընթաց զեկույցներիս մեջ գրել եմ, շարունակում ենք հուսալից մնալ հակառակ այս հապաղումին. Եթե մեր լավատեսությունը այլ պատճառներ չունենար, կարծում եմ, որ Վիլսոնը եթե համոզված չլիներ իր վերջնական հաջողությանը, հազիվ թե այստեղ, մինչև իր մեկնելը այնքան առաջ գնար իր խոստումների մեջ:

Ի լրումն այս տեսության հաղորդեմ Ձեզ նաև հետևյալը. ռուս գործիչ Վինավիր<sup>8</sup>, որ այժմ գտնվում է Փարիզում մի քանի օր առաջ տեսակցություն է ունեցել Ամերիկայի Կ.Պոլսի նախկին դեսպան Մորգենթաուի հետ և գրույցի մեջ վերջինս ի միջի այլոց հայտնել է, որ 1. Հայաստանի անկախությունը վճռված խնդիր է 2. Միացյալ Հայաստանը Կիլիկիայով հանդերձ կասկածից դուրս է: 3. Ամերիկան գրեթե հաստատապես ընդունելու է Հայաստանի մանդատը և 4. գուցե ինքը Մորգենթաուն նշանակվի Ամերիկայի ներկայացուցիչ Հայաստանում: Մորգենթաուի կարծիքին մենք առանձին նշանակություն ենք տալիս, որովհետև նա նախագահ Վիլսոնին շատ մոտիկ մարդ է և հայտնի է մանավանդ<sup>9</sup> հայկական վերջին սարսափների մասին իր նշանավոր աշխատանքով: Նրա այս գործը ջախջախիչ եղավ երիտասարդ թյուրքերի համար, որովհետև Մորգենթաուն իբր Պոլսի ամերիկական նախկին դեսպան փաստաթուղթերով և հիշողություններով լավ զինված կարողացավ Ամերիկայում և Յեվրոպայում իր այդ նշանավոր գրքով վճռական հարված հասցնել երիտասարդ թյուրքերին և թյուրքերին առհասարակ: Վերջերս Հայկական շրջաններում նա անվստահության ենթակա եղավ միանալով այն մարդկանց հայեցակետին, որոնք կարծում էին թե հնարավոր է Թյուրքիան փրկել նրա ձեկական ամբողջական դոգմայի անհրաժեշտությունը առաջ նետելով: Եվ երբ այս ծրագիրը ջուրն ընկավ, որպես ճկուն քաղաքագետ, Մորգենթաուն կարծես հանկարծական volte face-ով<sup>10</sup> նորից աշխատում է հայ շրջանների //73 վստահությունը գրավել: Մոռանալու չէ սակայն, որ նա ծագումով հրեյա է և ամերիկյան խոշոր տրեստի մարդ է:

Քանի որ Միացյալ Հայաստանի մասին է խոսքը ամփոփեմ այդ պրոբլեմը առաջ բերելով նաև այս տեղի ռուս պատասխանատու շրջանների վերաբերմունքը և մեր ունեցած վերջին տեսակցությունները նրանց հետ: Շտապեմ ասել, որ մեր և ռուսների հարաբերությունները շարունակում են մնալ cordial<sup>11</sup>. տեսակցություններն ու գրույցները բարեկամական են, և որպեսզի լիակատար ու ճշգրիտ գաղափար տամ Ձեզ այդ բանակցությունների արժեքի և ռուսների հայեցակետների մասին մեր հարցի վերաբերմամբ, ես առաջ կը բերեմ այստեղ հարազատությամբ պ.

Քաջազնունու և իմ վերջին տեսակցությունը Մակլակովի<sup>12</sup> հետ և վերջինիս վճռական հայտարարությունները: Մակլակովը ասաց մոտավորապես հետևյալը. - «Ժողովուրդների իրավունքը ինքնորինաբար տնորինել իրենց ճակատագիրը, հայտարարեց Մակլակով, մենք բացարձակ չենք համարում: Անհնարին է թույլ տալ, որ ուրաքանչյուր ազգ իր ուզած ժամին ինքնական զատվի այս կամ այն պետությունից, որի հետ նրանք կապում են քաղաքականից դուրս՝ բազմաթիվ այլ կապեր, բայց մենք ընդունում ենք, որ կան հանգամանքներ, երբ այդպիսի անջատումը ընդունելի է, նույնիսկ անխուսափելի»:

Այս ասելով նա վեր կացավ, արկղից դուրս քաշեց մի թուղթ և կարդաց գրեթե բառ առ բառ նույն տեսությունը, որ ասաց, թե ինքը նորերս արել է չորսի խորհրդի առաջ, երբ հրավիրվել է բացատրության Բեսարաբիայի խնդրի առթիվ:

«Դուք տեսնում եք շարունակեց Մակլակով, որ ես Ձեզ կարդում եմ պաշտոնական հայտարարություն և կրկնում եմ, թե կան պարագաներ, երբ մեկ ժողովուրդի մեկ պետությունից անջատումը մենք համարում ենք հնարավոր եւնույնիսկ անխուսափելի: Այսպես մինչդեռ մենք ոչ մի պայմանով չենք համաձայնի օրինակ մի Վրաստանի կամ մի Ադրբեջանի անջատումին մեզանից, բայց մենք ընդառաջ կերթանք բարեկամաբար Կովկասյան հայերի վճռական ցանկության միանալ թյուրքաց Չայաստանին, որը այսպես թե այնպես՝ անկախ է լինելու, մանավանդ որ մենք հավատացած ենք, որ այսպիսով ստեղծված միացյալ Չայաստանը լինելու է Ռուսաստանի բարեկամը և գուցե դաշնակիցը Արեվելքում, որովհետև այդ է պահանջում նաև հայերի շահը, քանի որ Չայաստանը չորս կողմից շրջապատված է մնալու ոչ քրիստոնիա և թշնամական տարրերով: Եվ մեր այս բարեացականությունը դեպի հայերը վոչ միայն արդյունք է Ձեր ժողովրդի դեպի Ռուսիան ցուցադրած համառ, անխախտ հավատարմության, որ մեր աչքում ահագին արժեք է, այլ մանավանդ կրկնում եմ այն պատճառով, որ մեր խորին համոզումով ինչ և լինի ապագա Չայաստանը, նա անխուսափելիորեն բարեկամ է մնալու Ռուսիային - ակրելքի միակ մեծ քրիստոնիա պետության: Եվ սա ոչ միայն իմ տեսակետն է, շարունակեց Մակլակով - այլ և իմ ընկերակից բոլոր Ռուս քաղաքական գործիչների Փարիզում»:

Մեր այն հարցին, թե ի՞նչ արգելք կա այս հայտարարությունն անել այժմ և եթե թեկուզ կիսապաշտոնապես, քանի որ դա այնքան անհրաժեշտ է մեր խնդրի շուտափուլթ լուծումի համար, Մակլակովը պատասխանեց. - «Տարաբախտաբար այդ անհնարին է, քանի որ իսկապես պատասխանատու և լիազոր որգան տակավին պակասում է քառտիկ Ռուսիայում, այդ վճռական, թեկուզ կիսապաշտոնական հայտարարությունն անելու, ինչքան և դա ցանկալի լիներ: Մենք, Փարիզում նստած ռուս Conference politique-ի<sup>13</sup> անդամներս այդպիսի լիազորություն չենք կարող մեզ յարացնել, որովհետև մենք ոչ այլ ինչ ենք, եթե ոչ ռուսական ժառանգության //74 պահապաններ. և այդ ժառանգության միահեծան

տերն ու տնորենը կարող է լինել միմիայն Ռուս ապագա սահմանադիր ժողովը, որ միայն իրավունք ունի ռուս հողի, այս կամ այն մասի, թեկուզ շատ փոքրիկ մասի անջատումի խոսքն արտասանել<sup>14</sup>:

«Մենք մինչև այն աստիճան զգույշ ենք և նախանձախնդիր պահապանի մեր դերում, որ նույնիսկ Ֆինլանդիայի անջատումի դեմ ստիպված եղանք բողոքել, թեև կարող են Ձեզ վստահացնել, մեր խորին համոզումով, Ֆինլանդիան լիակատար իրավունք ունի բացարձակ անկախության այն պարզ պատճառով, որ նա կապված էր Ռուսիային լոկ մեր վեհապետի անձնավորությամբ և քանի որ այդ վեհապետությունն այժմ չկա, Ֆինլանդիան ոտոմատիկ ձևով արդեն իսկ ազատ պիտի նկատվի: Բայց և այնպես, կրկնում են մենք բողոքեցինք որովհետև մենք չէինք կարող չը բողոքել, որպես պահապաններ հայրենի ժառանգության:

«Այս բոլորից հետո հուսամ Ձեզ հասկանալի է, թե ինչու<sup>15</sup>, հակառակ որ մենք լիապես ընդունում ենք Ձեր իրավունքը զատվել մեզնից և միանալ մեծ Ռայաստանին, մենք ստիպված ենք, թե այսօր դուք Ձեզ հայտարարեք միացյալ Ռայաստան - թեկուզ ձեվականորեն, մեղմորեն, բայց վերջապես բողոքել մեր երկրի ամբողջության սկզբունքը անխախտ պահելու համար, մինչև որ մեր սահմանադիր ժողովը իր խոսքն ասի, որ հավատացած են, հոգուտ Ձեզ է լինելու: Ավելացնեն սակայն, որ այսօր ինչ քայլեր անելու լինեն Ձեր միությունն ու անկախությունը ամրապնդելու համար - մենք չենք [խանգարի դրան բացառապես<sup>15</sup>] միայն այն պահուն, եթե դուք միանաք այս կամ այն մեզնից անջատումի ձգտող ժողովուրդի բողոքին մեր դեմ»:

Մեր առարկությանը, թե մենք չենք կարող անվերջ սպասել ռուս սահմանադիր ժողովին, որը ներկա պայմաններում շարունակում է պրոբլեմատիկ մնալ, Մակլակովը շտապեց պատասխանել, թե իրավունք ունի, գուցե այս դրությունից դուրս գալու համար հնարավոր է մի ընդունելի ժամանակավոր ֆորմուլա գտնել, մի որևէ կոմպրոմիս որ անհնարին չէ, օրինակ, մոտավորապես մի այսպիսի ձևով հայտարարություն Ձեր կողմից թե «վստահ լինելով, որ ռուս սահմանադիր ժողովը եթե նա լիներ այսօր չէր հակառակի մեր արդար իրավունքին, մենք հայտարարում ենք, Կովկասյան Ռայաստանի միացած մեծ Ռայաստանին»:

«Սա մի ձև է, շարունակեց Մակլակովը, որ մեզ չէր վիրավորի, և ընդունելի կլիներ, որովհետև այսպիսով մեր իրավունքը չէր արհամարհվի. նկատի առեք, խնդրում են, որ Յեվրոպան մեզ շատ է վիրավորել և վիրավորում. գուցե կգա մի օր, երբ մենք հաշիվ կը պահանջենք նրանից: Կուզեինք որ մեզ բարեկամ և մեզ միշտ հավատարիմ եղած հայերը նույնպես չվիրավորեն անգիտանալով մեր իրավունքը»:

Ռայտնեցինք որ մեր թյուրքահայերը մասնավորապես անհանգիստ են ռուս ապագա քաղաքականությունից, մենք ստիպված ենք հաշվի առնել նրանց խռովքը հոգեկան և մեր հարցը հանել կասկածների և վարանումների շրջանից. «Իրավունք ունիք, պատասխանեց Մակլակովը, տարաբախտաբար մենք էլ ստիպված ենք հաշվի առնել և իմպերիալիստ-

ների անհաշտ ոգին, հետևապես լավագույնը ընդունելի, միջին ֆորմուլա գտնելն է»:

Քաջագուննին և ես դուրս եկանք այն համոզումով, որ սա ռուսներից վերջին խոսքն է և ավելորդ է փորձել ավելին պահանջել նրանցից:

Ավելացնեմ ի գիտություն, որ պպ.Սաղաթեյան<sup>16</sup> եվ Շաթիրյան<sup>17</sup> գրում են Յեկատերինոդարից, որ Դենիկինյան ռուս շրջանները շատ դյուրազգաց են դարձել, և լսել չեն ուզում Ռուսիայի որևէ հողաբաժնի անջատումի մասին, ու ճգնում են վերականգնել Ռուսիան 1914 թվի ամբողջական սահմաններում բացի Լեհաստանից: //-75

Գրեցի Ձեզ այս բոլորը պ.Նախարար, հնարավորություն տալու համար Ձեզ մոտավոր գաղափար կազմել ռուսների քաղաքական մտայնության մասին, բայց այստեղ ոչ ոք չի կարող ասել, նույնիսկ ամենալավատեղյակ քաղաքական շրջաններում թե երբ պիտի վերականգնի Մակլակովների Ռուսիան, և որչափ մոտ է Բոլշեվիկյան ռեժիմի վախճանը: Փաստն այն է, որ Կոլչակի վրա դրված հույսերը չարդարացան, նա ստիպված է անվերջ նահանջել տեղի տալով բոլշևիկյան կարմիր բանակների առաջ. Պետրոգրադի անկումը, որի մասին այնքան անգամ հավաստի լուրեր հրատարակվեցին թերթերում, ամիսներից ի վեր, այսոր էլ մնում է անստույգ և տակավին պրոբրեմատիկ. այս է պատճառը անշուշտ, որ Դենիկինի հաջողությունները Ռուսիայի Չարավում վճրական համարվելուց շատ հեռու են. ամենաստույգ տեղեկությունը այն է, որ Ռուսիայի հյուսիսում ևս Արխանգելսկի շրջաններում հակաբոլշևիկյան բանակը վիստեցուցիչ ձախողանք է ունեցել մի քանի գնդերի բոլշևիկների կողմն անցնելու պատճառով: Եվ այսպես Պետրոգրադը տակավին հեռու է անկումից, Կոլչակը պարտված նահանջում է, Արխանգելսկում բոլշևիկների դիրքը ամրացել է. այս պարագաներում ո՞վ կարող է ասել, թե ե՞րբ է գումարվելու - թե երբ եվիցե գումարվելու է Մակլակովի երազած Սահմանադիր ժողովը: Նկատեցեք նաև, ինչ որ ամենից ծանրակշիռն է - դաշնակիցներից և ոչ մեկը տրամադրություն և հնարավորություն չունի բոլշևիկների դեմ բանակ ուղարկելու, ընդհակառակը, ամենքն էլ, մասամբ իրենց երկրի ներքին պատճառներով, հաճախ ծայրահեղ տարրերի ճնշման տակ ստիպված են հետ կանչել կամ գոնե նվազեցնել Ռուսիա գտնվող բանակները: Այս բոլորից հետո, կարծում եմ համարձակ չի լինի ասել, թե Ռուսիայի վերականգնությունն ու խաղաղությունը տակավին շատ մոտ չէ, հետևապես մենք լրջորեն հաշվի առնելով Մակլակովի և իր հոսանքի տրամադրությունները ու մտայնությունը պետք չէ գերազնահատենք նրանց ազդեցությունը ու արժեքը, մեր խնդրի մոտակա լուծման օրերում:

Այս պատկերը ամբողջացնելու համար հիշատակեմ այստեղ խաղաղության կոնգրեսին ներկայացրած ռուսական վերջին հուշագիրը (la note) հուլիս 5 թվագրով: Ներփակ կը գտնեք այդ փաստաթղթի պատճենը, որով ինչպես տեսնում եք այստեղի Conference politique russe-ը անուղղակի կերպով պահանջում է նեղուցները ու Կ.Պոլիսը՝ հենվելով

Ազգերի լիգայի 22 հոդվածի<sup>18</sup> վրա, որով դաշնակիցները մանդատների ռեժիմ են հաստատում թյուրքական նախկին հողերի վրա: Ձեր հատուկ ուշադրությանն են հանձնում ռուսական հուշագրի այս կետը, որովհետև, ըստ երևույթին, ռուսները նույն հուշագրի Հայաստանին վերաբերյալ մատուցում նույն ոգովն են առաջնորդվում. թեև անուղղակի կերպով հրաժարվում են թյուրքաց Հայաստանից հետևեալպես չեղյալ են նկատում 1916-ի դաշնագիրը, բայց վեր հանելով Ռուսիայի դերը Հայաստանում անցյալում, ցավ հայտնելով, որ նա այսօր անկարող է Հայաստանի մանդատն ստանձնել, կարծես վերապահումներ են անում ապագայի վերաբերմամբ և այդ նպատակով գրեթե պահանջում են, որ Հայաստանի մանդատերը հնար եղածին չափ շուտով հեռանա մեր երկրից: Սազոնովի<sup>19</sup> անունը զուր չէ այս փաստաթղթի տակ, որ ամբողջապես նրա մտայնության, նրա քաղաքական աշխարհահայացքի արդյունքն է. նկատեցեք նաև որ Կովկասյան Հայաստանի մասին զգուշացել են խոսք արտասանել<sup>20</sup>:

Ֆրանսիական պահպանողական օրգաններից մի քանիսի, ինչպես Temps, Écho de Paris - դիրքը դեպի ամբողջական Հայաստանի հարցը մնում է անբարեացական, պաշտոնական շրջանները լուռ վերապահումն ունեն: Պատճառն ինչպես գիտեք Կիլիկիայի խնդիրն է, թեև կասկածից դուրս է թվում որ եթե Ամերիկյան ստանձնե Հայաստանի մանդատը, Ֆրանսիան //-76 կամա ականա հրաժարվելու է Կիլիկիայից. բայց հակառակ դեպքում եթե Հայաստանի մանդատի խնդիրը նորից դառնա վիճելի Ամերիկայի հրաժարումով, Quay d'Orsay-ն<sup>21</sup> նորից պնդելու է 1916 թվի դաշնագրով իրեն վերապահված իրավունքների վրա և պիտի պահանջի գուցե Կիլիկիայի կցումը Սիրիային ամբողջն իր մանդատի տակ: Այս հավանական հեռանկարն է պատճառը, որ կիսապաշտոնական Temps-ը և մի քանի այլ պահպանողական օրգաններ ժամանակ առ ժամանակ մեջտեղ են նետում 16 թվի դաշնագիրը, Ֆրանսիայի հիմնավոր քաղաքակրթական իրավունքները ու միսսիան արևելքում, մյուս կողմից աշխատելով թյուրքերին շատ անհաճ չլինել: Եզգրիտ լինելու համար ավելացնում են սակայն, որ թյուրք պատվիրակության Փարիզից մեկնելուց հետո Կլեմանսոյի օրգան l'Homme libre գրեթե անպարկեշտության հասնող ոճով երկու խարանիչ հոդվածներ հրատարակեց թյուրքերի դեմ, ինչ որ անհատապես Կլեմանսոյի մտայնության արտահայտություն պետք է նկատել: Յեթե հիշատակեն այն, որ Temps-ը իր առաջնորդողներում հաճախ կծու ակնարկներ է անում Կլեմանսոյի հասցեին, Կիլիկիայի առթիվ, գուցե համարձակ չլինի ենթադրել, որ ֆրանսիական առաջին նախարարի և արևելքի տիրապետության կուսակից ֆրանսիացի դրամատերերի մեջ, որոնք բավական հզոր են, միականություն չկա: Ուղարկում են Կլեմանսոյի օրգան l'Homme libre-ի հիշատակածս երկու հոդվածները, որ ըստ իս զուրկ չեն քաղաքական աստառից:

Հասկանում են Ձեր անհանգստությունը անգլիական զորքերի Կովկասից քաշվելու լուրերի առթիվ, խնդրում են հավատալ, որ նույն խռովքը մեզ էլ պաշարել է շարունակ և Ձեր յուրաքանչյուր հեռագիրը

մեզ նոր և նոր և հաճախակի դիմումների նյութ են ծառայել: Այս տեսակետից առանձին ծառայություն մատուցեց մեզ պ.Թախթաջյանի<sup>22</sup> վերջին հաղորդագրությունը իրա տեսակցության մասին, որ նա ունեցել է Կ.Պոլսում անգլիական գլխավոր շտաբի շեֆի հետ: Այս գրույցի մեջ մեր ուշադրությունը գրավեց մանավանդ երկու կետ. 1. Որ Կարսի և Նախիջևանի անգլիացիների ձեռքով մեզ հանձնումը եղել է ոչ թե ինքնաբերաբար, այլ այստեղից գնացած հրամանով. 2. Որ անգլիացիք ոչ թե դեմ են մեր գաղթականներին իրենց երկիրը տանել տեղավորելու այլ այդ անկարող են անել, որովհետև դրա համար պետք եղած հրամանը չունին: Ի վերջո ավելացրել է անգլիացի գեներալը «Շատ բան է կախված Փարիզի Ձեր պատվիրակության ջանքերից»:

Անմիջապես Պողոս փաշային տարա պ.Թախթաջյանի նամակը և պնդեցի թե անհրաժեշտ է մի նոր և համոզիչ դիմումն անել խաղաղության կոնգրեսին, վերստին պնդելով որ դաշնակից զորքերը ստորադրեն մասնավորապես անգլիական բանակը Կովկասի, հանձն առնեն գաղթականների վերադարձի և տեղավորելու վերահսկողությունը: Պողոս փաշան համաձայնվեց ինձ հետ, որ Թախթաջյանի հաղորդագրությունը արժեքավոր է և անմիջապես պետք եղած հուշագիրը մեր երկուսի ստորագրությամբ ղրկեցինք խաղաղության կոնգրեսին: Միևնույն ժամանակ մասնավոր թղթով դիմեցինք Բալֆուրին խնդրելով 1. Չհանել Անգլիական զորքերը Կովկասից և 2. մեր գաղթականներին անգլիական և մեր զորքերով իրենց հայրենիքը վերադարձնել: Միաժամանակ մեր թղթերում ինչպես կտեսնեք, մենք հարուցանում էինք պարենավորման և փոխադրական միջոցների կրիզիսը - որից այնպես տառապում է մեր ժողովուրդը: Ուղարկում են ներփակ այդ գրությունների պատճենները<sup>x23</sup>: Երջանիկ են հաղորդել, որ մի քանի որ առաջ երբ Իտալական պատվիրակություն էի գնացել նրանց զորքերի Կովկաս գնալու լուրը ճշտելու ի միջի այլոց իմացա, որ մեր վերոհիշյալ խնդիրը հարգված է<sup>24</sup>: Դիմարտինո<sup>25</sup>, իտալական պատվիրակության ընդհանուր քարտուղարը հայտնեց ինձ թե գրեթե վճռված է իտալա-//77 կան զորքեր ղրկել Կովկաս բայց այս կարգադրությունը այժմս փոխված է. «Մենք Կովկաս գնալու չենք, բայց և դաշնակիցները անշուշտ այդ երկիրներից չեն քաշվիլ և չեն մատնի անիշխանության. երևի անգլիացիք կմնան»: Այնուհետև նա հայտնեց, որ Իտալիայի ներկայացուցիչները խաղաղության կոնգրեսում Հայաստանի մշտական և ջերմ պաշտպաններն են և կը լինին. ուրախացրեց ինձ հայտնելով նաև որ Կոնգրեսը կարգադրեց Անգլիական բարձր հրամանատարության ձեռքով թյուրքահայ գաղթականներին Կովկասից թյուրքաց Հայաստան փոխադրել և թե այս հարցում Տիտոնին<sup>26</sup> մեզ հզորապես պաշտպանել է: Դիմարդինոից իմացա նույնպես, որ ամերիկացի գնդապետ Հասկել կոնգրեսի կողմից նշանակված է Հայաստանի ընդհանուր կոմիսար, որպես դաշնակիցների ներկայացուցիչ քաղաքական և տնտեսական բոլոր խնդիրների համար: Նույն այդ լուրը հաստատեց ինձ Ամերիկայի այժմու առաջին պատվիրակ Ուայդ<sup>27</sup>, որին տեսա երկու որ

առաջ: Սակայն, մինչդեռ Դիմարդինոն ասաց, որ Հասկելը կոմիսար է ամբողջական Հայաստանի, Ուայդը իմ հարցին պատասխանեց թե միայն թուրքաց Հայաստանին: Սա կարևոր հանգամանք է որ ես կաշխատես ճշտել այս օրերս:

Այսպես թե այնպես Հասկելի նշանակումին այստեղ քաղաքական շրջանները կրկնակի արժեք են տալիս. 1. Լինելով Ամերիկացի, նա արդեն անպաշտոն կերպով ներկայացնում է ամերիկական մանդատին, ումանք նույնիսկ կարծում են, որ այդ անվանումը Վիլսոնի առաջին քայլն է դեպի Հայաստանի մանդատին: 2. Իր բարձր կոմիսարը դրկելով Հայաստան, Խաղաղության կոնգրեսը փաստորեն հայ աշխարհը յուր ձեռքին է տանում հեշտացնելու համար մեր պրոբլեմի լուծումը անմիջական ու վստահելի զեկույցների հիման վրա: Մանավանդ պարենավորման տեսակետով Հասկելին ահագին նշանակություն են տալիս, քանի որ նրա ձեռքում պիտի ամփոփվի այսուհետև Հայաստանի նպաստավորման և պարենավորման ամբողջ ապպարատը: Բնորոշ է և սրտապնդիչ, որ Հասկելի նշանակումի հետ միաժամանակ դաշնակիցները հրամանադրեցին Վրաստանի կառավարության դադարեցնել Հայաստանի պարենավորման դեմ հարուցած արգելքները. հուսամ թե այս հրամանը ապարդյուն չի անցնի: Ի վերջո ավելացնեն նաև որ ինչպես հայտարարեց նորերս անգլիական զինվորական նախարարը համայնքների պալատում անգլիական զորքերը առայժմ Կովկասից հեռանալու չեն մինչև առաջիկա նոր տարին. այնուհետև, երբ անգլիական զորքերը հեռանան «Սեվ ծովյան շրջանում Անգլիան կը պահի տասն հազարանոց կամավորական մի բանակ»: Այստեղ կարծում ենք, որ Սև ծովյան շրջան ասելով պետք է հասկանալ հավանաբար Բաթումի շրջանը: Հաղորդելով Ձեզ այս բոլորը պ.Նախարար, պատվիրակությունը պատիվ ունի խնդրել Ձեզ շուտափույթ մեզ հասցնել լիակատար և ճշգրիտ տեղեկություններ մեր երկրի և ժողովրդի արդի վիճակի մասին: Մեր դիմումների և մեր հետագա քայլերի համար անհրաժեշտ է մեզ իմանալ մասնավորապես 1. Մեր զորքի քանակը և վիճակը: 2. Պարենավորման գործի դրությունը: 3. ներկա հունձը և աշնանացանքսի կարելիության աստիճանը: 4. Փախստականների վերադարձը, 5. Որչափ հաստատուն է մեր վարչությունը նոր գրաված վայրերում - Կարսի և Նախիջևանի շրջաններում: 6. Թյուրքերի շարժումները Կարինի և նրան հարակից շրջաններում:

Խորին հանգամանքներով

Նախագահի Հայաստանի Հանրապետության Պատվիպրակության Փարիզում Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, մ.1, թ.14-23: Բնագիր: Մեքենագիր: //-78

## N° 2

ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ  
Ս.ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ

30 հուլիս, 1919թ.

Փարիզ

«Փարիզ 30 Հուլիսի 1919թ.

Հայաստանի Արտաքին գործոց նախարար պ.Ս.Տիգրանյանին

Ղարաբաղի խնդիրը ինչպես Ձեզ այդտեղ, մեզ համար ևս ամենամտահոգիչ խնդիրն եղավ և շարունակում է լինել: Չբավականանալով այն քայլերով և այն պաշտոնական գրերով որով այդ այրող հարցը խաղաղության կոնգրեսի և մասնավորապես Անգլիական պատվիրակության առաջը դրինք դարման և լուծումն խնդրելով, միաժամանակ պատվիրակությանս ընդհանուր քարտուղար և խորհրդական պ.Ս.Վարանդյանը Լոնդոն ճամբվեց տեղ մը, եթե հնար է, անգլիական զինվորական շրջանների իսկական վերաբերմունքը ճշտելու և ի հարկին անգլիական մեզ բարեկամ քաղաքական գործիչների միջոցով մեզ ցանկալի ազդեցությունն ու ներշնչումը անելու: Թե իր. Վարանդյանի բերանացի գրույցներից Ֆորեյն Օֆիսի վարիչների հետ և թե հայասերների ճշգրիտ տեղեկություններից պարզվում է որ 1. Ղարաբաղի և նրան հարակից խնդիրներում գեներալ Տոմսըն<sup>28</sup> և իր գործակիցները ու հաջորդը գործել են ոչ իրենց գլխու այլ արտաքին գործոց և զինվորական նախարարությունների գիտությամբ և համաձայնությամբ: 2. Թե Տոմսընի և թե մյուս գեներալների և անգամ Ձեզ մոտ հայասեր համարված Բիչի<sup>29</sup> զեկույցները մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում միշտ եղել է ի վնաս մեզ: 3. Անգլիան ինչպես ամեն տեղ և մեզ մոտ վարում է քողարկված, բայց սիստեմատիկ մուսուլման քաղաքականություն: 4. Ղարաբաղի վերաբերմամբ նրանց որոշումը համառորեն ձգտելու է այդ հայաշատ գավառը կցել Ադրբեջանին, թեև առայժմ իրենց գործողություններին անգլիական գեներալները արտաքուստ տալիս են ժամանակավոր կերպարանք: Ի միջի այլոց, Վարանդյանը զինվորական նախարար Չերչիլին ներկայացրել է մի հակիրճ հուշագիր Ղարաբաղի հարցի մասին հաստատված մեր ձեռքի տակ եղած Չեր ղրկած պաշտոնական փաստաթղթերի վրա: Այդտեղ հարազատորեն պատմված է անցքերի զարգացումը, Ղարաբաղի ազգային խորհրդի և Անգլիական հրամանատարության մեջ տեղի ունեցած բանակցությունները, Ադրբեջանի ագրեսիվ շարժումներն ու զինվորական գործողությունները, դր.Սուլթանովի<sup>30</sup> արարքներն ու նրա ով լինելը: Չերչիլ իր քարտուղարի<sup>31</sup> միջոցով պատասխանում է այս գրության թե ինքը հատուկ քննություն կատարելուց հետո կարող է հայտարարել, թե «Ղարաբաղը հայերից առընվելը և Ադրբեջանին կցել grossly inaccurate է» - այսինքն «կոպտորեն անճիշտ է»: Նկատեցեք, որ Չերչիլ իր այս պատասխանով դիտմամբ անտես է առել Վարանդ-

յանի հուշագրի բոլոր մյուս փաստերն ու տեսությունները ու կանգ առել մի հայտարարության վրա, որ համեմայն դեպս, իր այս կատեգորիկ ձևով Վարանդյանի տված հուշագրի մեջ չկա: Այնտեղ ասված է միայն որ թաթարներն են իրենց կցված համարում Ղարաբաղը իսկ անգլիական հրամանատարությունը տվել է իր համաձայնությունը Սուլթանովի պես մեկին նահանգապետ նշանակելուն: Իբրեվ ձեվական հերքում գուցե և Չերչիլ իրավունք ունի, բայց իրերի եությունը մնում է հաստատուն և այդ այն է, որ Անգլիական հրամանատարությունն իրոք ոգնել է հազար և մի վատ քողարկված հնարներով հայկական Ղարաբաղը կցել թաթարստանին: Լավագույն է սակայն, որ ես այստեղ //-79 մեջ բերեմ Չերչիլի պատասխանի անգլերեն բնագիրը ուղղված մեզ բարեկամ Վիլյամսին<sup>32</sup>

Dear Williams

With reference to your letter of the 23 June regarding the state of Karabagh being taken from the Armenians and annexed to tartar Azerbaijan, M.Churchill has had full and special inquiries made and has asked me to inform you that there is not the least foundation for the statement which is grossly inaccurate.

Your faithfully.

Սիրելի Վիլյամս

Ի պատասխան Ձեր 23 Հունիս թվակիր նամակին վոր վերաբերում է Ղարաբաղի դրության որը խլվել է հայերից և միացվել է Ադրբեջանի թաթարներին պ.Չերչիլ քննություն կատարել տվեց մասնավորապես և մանրակրկիտ եվ խնդրեց ինձ հայտնել որ այս փաստը ոչինչի վրա հաստատված չէ և որ այն կոպտորեն անճիշտ է:

Չերչիլ եվ այլն<sup>33</sup>:

Իսկ թե մինչեվ ինչ աստիճան անգլիական կենտրոնը իրազեկ ու քաջալերիչ է Տոմսոնյան քաղաքականության Կովկասում այդ կը նկատեք այն գրույցից, վոր Հունիս 17-ին Վարանդյանը ունեցել է Արտաքին գործոց նախարարության մեջ մեր բարեկամ Ջեյմս Պրասի<sup>34</sup> հանձնարարությամբ: Վարանդյանի բերանացի զեկույցի մեր ժողովուրդի բազմապիսի թշվառությունների մասին լսելուց հետո պ.Բալֆուրի օգնականը<sup>35</sup>, հենց հարցը հասել է Ղարաբաղին, կանգնեցրել է Վարանդյանին ասելով «Ղարաբաղի մայրաքաղաքը Շուշին է, այնպես չէ, հենց նոր հեռագիր ստացանք, թե Շուշիում արյունահեղ ընդհարում է յեղել եվ սպանվածների մեջ կան անգլիացի զինվորներ»:

Այդ թաթարական ընդհարում է անշուշտ, պատասխանել է Վարանդյանը և չեն կասկածում, որ անգլիացոց վրա կրակած լինին ավելի շուտ թաթարները և վերջապես ով ուշի ուշով հետևում է անցքերին նրա համար անսպասելի չէին այս ցավալի անցքերը: Եվ երբ այսպես շարունակելով հասել է Տոմսոնի հայավնաս ընթացքին՝ նախարարի օգնականը նրան պատասխանել է բառ առ բառ հետևյալը. «Ամենքը գանգատվում են գեներալ Տոմսոնից և՛ վրացիք, և՛ թաթարները, և դուք՝ հայերդ. ես ձեզ վստահացնում եմ պ.Վարանդյան, ամեն օր մենք ստանում ենք բողոքի

հեռագրեր զանազան վայրերից. ես Ձեզ հավատացնում եմ, որ թաթարներն ու վրացիք նույնպես խստորեն գանգատվում են հայերից, խոսում են նրանց անբարիշտության և չափազանց պահանջների մասին. գանգատվում են թե Տոմսոնը նպաստավորում է միայն հայերին... և քանի որ ամենքն են գանգատվում, դա լավագույն ապացույցն է, թե Տոմսոնը արդարությամբ է գործում»:

Եվ երբ դրան ի պատասխան Վարանդյանը առաջ է բերել Լոռու, Ախլքալակի, Ղարաբաղի խնդիրները և Տոմսոնի բռնած հակահայ ընթացքը այդ խնդիրներում, նախարարի ոգնականը շտապել է ավելացնել, թե այդ բոլորը ժամանակավոր է, և թե «խեղճ գեներալ Տոմսոնը միայն իր պարտքն է կատարել»: Կարծում եմ որ վերջին խոսքերով ամեն ինչ ասված է, ասել է թե Անգլիայի գեներալները կատարում են Կովկասում իրենց պարտքը հանդեպ իրենց կառավարության:

Ձեզ թողնելով պ.Նախարար, պետք եղած եզրակացությունը հանել այս զեկույցից, ես թույլ եմ տալիս ինձ ավելացնել, որ եթե ստույգ է, որ «Գեներալները կատարում են իրենց պարտքը հանդեպ կենտրոնական կառավարության», նույնքան էլ ստույգ է, որ Կենտրոնական կառավարության կամքն ու տրամաբանությունը անհրաժեշտապես մշակում են կանխապես այդ իսկ ստորադրյալ գեներալների զեկույցներով: Հետևապես թե //80 դուրս այդտեղ և թե պատվիրակությունն այստեղ ձեռքերը ծալելու չէ միայն այն պատճառով, որ կարգադրությունները կենտրոնից են գալիս, անհրաժեշտ է անել բոլորն ինչ հնարավոր է, այստեղից եկող զեկույցների ոգին փոխել համառ հետեվողական աշխատանքով: Այն փաստը, որ զինվորական նախարարը Վարանդյանի հուշագիրն ստանալեն մեկե երկու օր հետո, կարողանում է հայտարարել այդքան վճռական եղանակով, թե ինքը քննություն կատարեց, ապացույց է որ այդ քննությունը կատարվել է հենց Լոնդոնում, ուր գտնվում է Տոմսոն. (նրա ամուսնության հայտարարությունը կա թերթերում) հետևապես այս գեներալի զեկույցները ծառայել հիմք զինվորական նախարարի այդքան համարձակ հայտարարության:

Այսքանը Լոնդոնում. ինչ վերաբերում է Փարիզին խնդրում եմ հավատալ, պ.Նախարար, որ պատվիրակությունն ոչ մի առիթ բաց չի թողել Ղարաբաղի խնդրի շուտափույթ եվ արդար լուծման վրա հրահրելու թե խաղաղության կոնգրեսի և թե մասնավորապես Անգլիական պատվիրակության և հատկապես Բալֆուրի ուշադրությունը: Մանրամասն և ընդարձակ տեսությամբ ամենաճշգրիտ ուղղագրական վիճակագրությամբ - պատրաստված գեներալ Կորգանյանի<sup>36</sup> հմուտ աշխատանքներով - պարտ ենք ներկայացնել բոլոր պատվիրակություններին և Կոնգրեսին այս աշխատության և մեր փաստերի մասին, որ թե ամերիկյան և թե իտալական պատվիրակության մեջ ինձ ասացին բերանացի իրենց գոհունակությունը և մեր իրավունքի անժխտելի լինելու բացարձակ համոզումը Ղարաբաղի խնդրում: Ֆրանսիացիք անտարբեր են, իսկ անգլիացիք, գիտեք, դժվարությամբ են խոսում առհասարակ:

Վերջերս նախարարապետի մի քանի հեռագրերից և մասնավորապես Ձեր ընդարձակ հեռագրից ազդված, այս անգամ Պողոս փաշայի հետ միաբան և միասին ստորագրելով նորից հուշագիր տվինք պ.Բալֆուրին. այս փաստաթղթի պատճենը դրկում են ահա ներկայացնելով Ձեր ուշադրությանը: Թույլ են տալիս ինձ հուսալ, որ նույնիսկ անգլիացիք, թեև հաճախ լռակյաց, անհետեվանք չեն թողնում մեր այս բազմաթիվ և երբեմն խուճապային (alarmant) դիմումները և կարծում են ձեռք բերված արդյունքի մեջ պատվիրակությանս ջանքերը որ և ե բաժին ունին: Տարաբախտություն - անկասկած, որ անգլիացիք ամեն տեղ հետամտում են իրենց մուսոուլման քաղաքականությանը, և մեզ նման թույլ և նրանց շահերի տեսակետից միանգամայն անվտանգ ազգը հեշտությամբ զոհ է գնում նրանց այս դաժան քաղաքականության:

Այս օրերս սակայն, գուցե անբավարար նկատելով իր զինվորականների քաղաքականությունը Կովկասում, անգլիական կառավարությունը նշանակեց իր քաղաքացիական ներկայացուցիչը: Այս Հուլիս 25-ին Բալֆուրի քարտուղարը հայտնեց մեզ այդ նշանակումը հետևյալ դրությամբ, որ առաջ են բերում իր առանձին կարևորության տեսակետից: Ահա սա.

«Պ.Բալֆուր ինձ խնդրում է Ձեզ հաղորդել, որ նորին մեծության կառավարությունը որոշում է (s'arranger) ուղարկելու պ.Վարդրոբին (Wardrop)<sup>37</sup> քաղաքական միսիոնով (une mission politique) Անդրկովկաս: Պ.Վարդրոբը առանձնապես ընտրվեց այս միսիոնի համար իր մեծ փորձառության համար Անդրկովկասում և իր երկարատև պաշտոնավարության համար Ռուսիայում որպես նորին մեծության հյուպատոս: Մենք հույս ունինք որ նա կկարողանա ճամբա ընկնել այս ամսի վերջին:

Պ.Վարդրոբը իրազեկ կը պահի նորին մեծության կառավարությունը Անդրկովկասի դրության մասին, բայց իր միսսիան ոչ մի կերպով նկատվելու չէ որպես ճանաչումն (reconnaissance) Հայաստանի կառավարության բրիտանական կառավարության կողմից: // -81

Այստեղ այն կարծիքին են, վոր Վարդրոբի նշանակումը մեր երկրում անգլիական այդտեղի հետեված քաղաքականության մեջ փոփոխության է բերելու. և երկրորդ ինչքան և նախազգուշացնեն թե այդ նշանակումը մեզ ճանաչել չի նշանակում, այնուամենայնիվ զինվորական ներկայացուցչությունը հանկարծ քաղաքականի վերածելը ինքնին մի խոշոր քայլ է դեպի այդ ճանաչումը մեր պետության. նկատի առնելու է, որ այս պաշտոնադիրն սկզբում խոսում է Անդրկովկասի մասին, և վերջում հանկարծ դառնում է Հայաստանին: Մեզ այս վերջին պարագան իրավունք է տալիս կարծելու, որ Վարդրոբը երևի Յերեվան է գալու: Եթե այս ենթադրություններն իրականանան ապա մնում է այդտեղ բուռն աշխատանք թափել երկրի ճշգրիտ դրությունը պարզելու Բրիտանիայի այս նոր ներկայացուցչին, որ ինչպես տեսնում եք հիշյալ գրությունից, մեծ վստահություն է վայելում անգլիական Արտաքին Գործոց Նախարարության աչքում:

Այսոր Ֆրանսիայի կապիտան Հասվիլդը<sup>38</sup> եվ Ժ.Փիրոյան<sup>39</sup> բերին Ձեր վերջին պաշտոնագրությունները որոնք կժառայեն մեզ կատարելու նոր և

ավելի ստիպողական դիմումներ մասնավորապես Ղարաբաղի մասին: Արդյունքը կհաղորդեն անմիջապես:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, մ.1, ք.24-28: Բնագիր: Մեքենագիր:

#### Ծանոթություններ

1. Արտաքին գործերը արդեն պաշտոնավարում էր Ա.Խատիսյանը:
2. Հակոբ Բագրատունի - գեներալ-մայոր, Փարիզում ՀՀ պատվիրակության անդամ, ռազմական առաքելության նախագահ:
3. Արթուր Բալֆուր - Բրիտանիայի արտաքին գործերի նախարար:
4. Հուսեյն Ռաուֆ բեյ – Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար, ազգայնական շարժման կազմակերպիչներից:
5. Sabotage - նենգադուլ:
6. Էդմունդ Ալենքի - դաշտի մարաջախտ, բրիտանական գերագույին կոմիսարը Եգիպտոսում:
7. En attendant – առայժմ:
8. Մաքսիմ Վինավեր - կադետ, կուսակցության կենտկոմի անդամ, Փարիզում համագործակցում էր «Եվրոպեյսկայա տրիբունա» ամսագրում և «Պոսլեդնիե նովոստի» թերթում:
9. «Բայց վորչափ» բառերից մինչև «հայտնի ե մանավանդ» բառերը բնագրի վրա խաչ է քաշվել ու ձեռագրով նշվել է. «Չի տպագրել»:
10. Volte face - շուռ տալ:
11. Cordial – սրտառուչ:
12. Վասիլի Մակլակով - ժամանակավոր կառավարության դեսպանը Փարիզում, հետո այնտեղ գործող Ռուսական քաղաքական խորհրդակցության աշխատակից:
13. Conference politique russe - Ռուսական քաղաքական խորհրդակցություն:
14. Այդ, ու հետագա ընդգծումները պատկանում են վավերագրին:
15. Թերթի եզրում բնագիրը չի ընթերցվում:
16. Հովհաննես Սաղաթեյան - Ա.Դենիկինի Կամավորական բանակին կից ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ:
17. Մարտիրոս Շաթիրյան - արտաքին առևտրի գծով միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ:
18. Ազգերի լիգայի Կանոնադրության 22 հոդվածը սահմանում է մանդատային վարչությունը և անդրադառնում է Թուրքական կայսրության այն ազգերին, որոնք կանխապես ճանաչվում են անկախ ու ստանում մանդատարի աջակցություն: //-82
19. Մերգեյ Սազոնով - Ռուսաստանի արտաքին գործերի նախարար, Փարիզում ՌԲԽ-ի անդամ:
20. «Ել մնում ե անստույգ» բառերից մինչև «խոսք արտասանել» բառերը բնագրի վրա խաչ է քաշվել ու ձեռագրով նշվել է. «չի տպագրել»:

21. Quai d'Orsay - Ֆրանսիայն արտաքին գործոց նախարարության հասցեն:
22. Ֆերդինանդ Թախթաջյան - Կ.Պոլսում Հայաստանի Հանրապետության դեսպանորդ:
23. «Այս տեսակետից» բառերից սկսած մինչև «գրությունների պատճեններ» բառերը բնագրի վրա խաչ է քաշվել ու ձեռագրով նշվել է. «չի տպագրել»:
24. «Ի միջի այլոց»-ից մինչև «խնդիրը հարգված է» նախադասության վերջամասը ջնջված է:
25. Ջակոնո դի Մարտինո - Փարիզում իտալական պատվիրակության ընդհանուր քարտուղար:
26. Թոմմազո Տիտտոնի - Իտալիայի արտաքին գործերի նախարար:
27. Հենրի Ուայթ - ԱՄՆ-ի դեսպան Փարիզում, այնուհետև ամերիկյան պատվիրակության անդամ:
28. Վիլյամ Մոնտգոմերի Թոմսոն - գեներալ, Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար:
29. Վիլյամ Բիչ - գեներալ, Կովկասում բրիտանական հետախուզության պետ:
30. Խոսրով Սուլթանով - Ղարաբաղ-Չանգեզուր ընդհանուր ժամանակավոր նահանգապետության համար նշանակված ու Ղարաբաղի մասով միայն իր վարչակարգը իրականացած գեներալ-նահանգապետը:
31. Արչիբալդ Սինքլեր - Բրիտանիայի ռազմական նախարար Ու.Չերչիլի քարտուղար:
32. Անյուրին Ուիլյամս - Բրիտանական պառլամենտի անդամ, Բրիտանահայկական կոմիտեի նախագահ:
33. Բնագրում ներառված անգլերեն նամակի թարգմանությունը ճիշտ է:
34. Ջեյմս Բրայս - Բրիտանական պառլամենտի և Բրիտանա-հայկական կոմիտեի անդամ:
35. Ջոն Էնթոնի Թիլլի - Բրիտանիայի արտաքին գործոց նախարար Ա. Բալֆուրի օգնական:
36. Գաբրիել Ղորղանյան - գեներալ, Փարիզում ՀՀ պատվիրակության խորհրդական:
37. Ջոն Օլիվեր Ուորդրոպ - Բրիտանիայի գլխավոր կոմիսարը Անդրկովկասում:
38. Նիկոլա Գասֆիլդ - ֆրանսիական բանակի լեյտենանտ, Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ծառայող:
39. Ժ.Փիրոյան – Փարիզում գործում էր ՀՀ պատվիրակության խորհրդական Արտեմ Փիրալյանը, այլ պաշտոնյա չի գտնվել: //-83